ԲԱԶՄԱՎԷՊ

Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 13. 1851 ՅՈՒԼԻՍԻ 1.

ՆԵՐԲՈՂԵԱՆ
ՅԵՐՋԱՆԻԿ ՆԱԽԱՀԱՅՐ
ՈՒԽՏԻՍ
Ի ՄԵԾՆ ԵՒ Ի ԼՈՒՍԱՆՈՐՈԳ ՄԽԻԹԱՐ[1]

Բ.

Արկուն ձայնք են, Հարք իմ և Ա արդապետք, ընտրելոյն Աստուծոյ. Ձայն բարբառոյ քարոզութեան՝ որով ընդ երկրածնայս խօսին, և ձայն բարբառոյ վշտաց և արեան՝ որով ընդ երկնից բարբառին։ Պատգամքն աստուածեղէնք երկնաւոր վարդապետին և բազմապատիկ սքանչելիք, յանարգ փայտ մահու առեալ ածեն զնա. և առ փայտն անարգութեան խուռն դիմեն ազգք և ազգինք յերկրպագութիւն. և նորա վըկայիցն արիւնք, նոքա արդասաւոր զՀրշմարտահաւատ դաւանութիւնս մեր պտղաբերեցին։ Ընդ նոյն փորձ դըժուարին անցանել առաջի կայր և Մխիթարայ. ո՛հ, բարերարել փափաքեր, վասն որոյ զգին քրտանց իւրոց և արեան պաղատեր։ Սէր Աստուծոյ իբրև զիւղ սրբազան արկեալ էր 'ի սիրտ Մխիթարայ. հուր էր և սէր ազգին որ զայն վառեալ բորբոքեր. մեծ էր խորհուրդն նորա բարերարել ազգին, և մեծագոյն ևս այնու, զի ոչ միայն յերկնաւորն ապաստան վստահացեալ էր օգնականութիւն, այլ և յերկրաւոր բարերարելոցն երախտամուռայ ապաշնորհութիւն. գիտելով չափ եթէ 'ի նոցա օժանդակելոյ հոգւոյն զեղանին առատանան շնորհք։ Ցեղի տացեն, աղաչեմ, ցաւք ձեր և հեծութիւնք, զի զՄխի-

[1] Զառաջին մասն Ճառիս դոցես յէջ 129։

թար տարագիր տեսէք 'ի Հայրենեացն, տարագիր և յայգւոյն զոր քրտնալիր ուռգեաց. պնդեցան նոքա զհետ աճապարել զհոսանս օգնականութեան երկնից 'ի վերայ Մխիթարայ. լի եղեն սրտմտութեամբ, զի լցին ողորմութիւնք Աստուծոյ. բարկացան, զի Աստուած քաղցրացի. հայհոյեցին, զի Աստուած օրհնեսցէ. եդին խափան և արգելս ոտից նորա, զի Աստուած առաջնորդեսցէ. նոքա երևելեօք, Աստուած աներևոյթ վառեալ զօրութեամբ։ Եւ կարի իսկ քաջ. Մխիթար սիրեաց զՀայրենիս, քանզի սիրեաց զԱստուած. սիրեաց և զԱստուած, քանզի զՀայրենիսն սիրեաց. երկնաւորին ցանկացաւ Հայրենեաց, զերկրաւորս իբրև սանդուղք իմն լուսեղէն առ այն կազմեալ. զՀայրենի երկրին արտասուօք և ապաժոյժ քրտամբ զհողն եթայ, և յերկինս զուրախութիւն գանձեաց. աստէն զվիշտս, անդէն զբերկրութիւնս. աստ զցաւս, անդ զհրճուանս. յերկրի հոգ և անդաճմունք, յերկինս խաղաղութիւն յիսուսաւանդ, զմահն յանձն առեալ վասն երկրաւորիս, զի անդէն զկեանս ժառանգեսցէ։ Եւ մտանէր յասպարէզն Մխիթար զերկնից և զերկրի միանգամայն զաչս յինքն ձգելով, երկրայնոցս զամենայն ճիգն յանձին կալեալ՝ խոչ և խափան ոտից աւետարանչին խաղաղութեան արկանել, և երկնայնոցն 'ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ տանելով, զի մի զքարի հարցին ոտք նորա։

Դաջի և արուեստագէտ ճարտարապետի գործ է ապաքէն եթէ զխարխալեալ ինչ շինուած կամիցի նորոգ կառուցանել, մերձ մատուցեալ ուշի ուշով քննել եթէ ո՞ր այն պատճառք դրդուանայն իցեն, և զի՞նդ հաստատեղոյս և ամրապինդ մարթասցի զշինն կառուցանել։ Բաւել քան զիմաստուն ճարտարապետ՝ Մխիթար մերձենայր նկատել զՀայաստան. զաշխարհն՝ զորոյ ճարտարապետն բոլորից անդնդալիր ձգեաց զհիմունս, և զոր հաստատուն գործեցին քրտնալիր վաստակքն և արիւնք հեղեալք։ Դրունս իմն գաղտնաբծաւուկ զտգիտութեանն տեսանէր, ուստի սպրդեալ սողոսկի սատանայ, և կերպարան զհրեշտակին լուսոյ արկեալ զանձամբ վեր 'ի վայր զեկեղեցւոյ կարգացն բարեզարդութիւն տապալէ։ Եւ տգիտութիւն ոչ վարկպարազի՝ այլ 'ի հաւատոյս, և զանխնամ դաստիարակութիւն մանկտւոյ։ Աստարէզ իմն էր այն լայնածաւալ, և առաջի կայր աստուածային սիրոյն և հայրենեացն զինեալ զօրութեամբ անցանել 'ի հանդէս՝ յոր բազմաց մուտ գտեալ և ելն աղագս ոչ գտանէին. և յոր անմտութիւն իցէ ձեռն արկանել, եթէ ոչ մերձ Աստուծոյ օգնականութիւնն լինիցի։ Բայց խորհուրդք լայն և ընդարձակ, և աւուրք համառօտք տուան մարդոյ. վասն որոյ և որ զփրկագործ չարչարանսն յանձին կալեալ, թափելոց էր զմարդիկ 'ի գերութեան կապանացն, աշակերտս արժանաւորս անուան իւրոյ և աստուածային վարդապետութեանցն 'ի վեր երևեցուցանէր։ Ոնոյն և Մխիթար խորհեցաւ և իբրև զփրկիչն իւր երևի յեզերս Յորդանանու, սկիզբն առնել յաղթական աւարոյն. պատմէ զաւետարանին վարդապետութիւն, արկանէ զուռկան աստուածային սիրոյն 'ի ծով աշխարհի, 'ի խորանդունդն և 'ի լայնածաւալ, որոյ ալիք իւր յաւիտենից և հողմունքն անլռելի, Եւ գան մօտին մերձենան առ վարդապետն, որք խաչիւ յաղթանակելոց էին, յօժարք դիմագրաւ նահատակ անցանել վշտաց և հալածանաց։ Եւ ահա տեսանեմ ես զնոսա որք իբրև զիշխանս և զթագաւորս հրամանատարս աղգաց, սփռին ծաւալին ընդ ոլորտս Հայաստանեայց. քարոզք՝ որք ինքնին ելցեն 'ի խաչ, փոխանակ զխաչին ուսուցանելոյ ճանապարհ. որք հացիւ ցաւոց և ջրով արտասուաց 'ի խաւարարգել դիպահոլ յագեսցին։ Դանզի արժան է ապաքէն, որպէս և ոմն յաստուածամերձից արանց ուսուցանէր, զի որ ըբանն կենաց ազդէ յունկն ժողովրդեան, ահագին և մեծավայելուչ իմն բարբառով զբանն յօգեսցէ։ — Եւ ո՞ր այն իցէ, նոյն աստուածարեալ այր հար-

ցանէ, բայց փողն աւագափող օրինակի բարեաց, որ ճարտարախօս և պերճաբանն է քան զամենայն բարբառ, և անցանէ մինչև ցորոշումն յօդից և ուղղոյ. ձայն է նա որ զմայրն փշրէ ըստ մարգարէախօս պատգամաց, որ խռովեցուցանէ զանապատս սրտից և հատանէ բոյ 'ի հրոյ, զՅուր արտասուաց և զՀուր աստուածային սիրոյն՝ յանապատացեալ սրտիցն միանգամայն բղխեցուցանելով։ Ոգի 'ի բռին վաստակին առաքեալքն Մխիթարայ. և իբրև զաշակերտս քաջի հովուապետին զուղղոցն ինտուն և ինն գումար թողեալ յամէնընկալ փարախի Քրիստոսի եկեղեցւոյն, զՀետ միոյ կորուսելոյն թափառեալ շրջին, անցանել ընդ վախս և ընդ երէց. զբիրտն ընդ արտասուս խառնել, զՀառաջանս ընդ լալեացն կցորդել, մինչև զոչխարն գտանիցեն մոլորեալ, և 'ի վերայ ուսոց իւրեանց բարձեալ, լի հրճուալից ուրախութեամբ բերկրապատար ինդութեանն իւրեանց հաղորդս զբարեկամն կոչիցեն . . . Այլ ո՞չ և սիրտք ձեր քստմնիցին յորժամ զբարեկամն թուեցեալս, 'ի թշնամանագիր նենգութիւն կերպարանափոխ լեալս տեսանիցէք, որք ոչ միայն նոցա ինդութեանն հրճուակիցք ոչ լինիցին, այլ և նախանձու բարկութեամբ սպառազինեալք 'ի վերայ վարդապետին դիմեալ արշաւիցեն եթէ "Լսես, զինչ ասեն դոքա „. . . — Այլ եթէ դոքա լռեսցեն, քարինք աղաղակեսցեն. ձայն տացեն նոքա որոց զաչս շլացութիւն նախանձու ոչ կուրացոյց և զորս ճշմարտութիւնն լուսաւորեաց. վկայք 'ի մէջ անցցեն Սեբաստիա և Լուդոկիա, Նիկիւրիա և Սերիա, Նիթափ և Սիւզանդիոն, որք քստմնէին ինն եթէ զիարդ հալածական մերժին այնոքիկ, զորս պարտ էր սիրով ողջագուրել . . . Այլ ո՞հ, չար և յոյժ ամենաչար է ախտ նախանձու. զի ոչ պատկառեաց նա և 'ի փրկիչն թափել զիւր լեղի դառնութեան. զաշխարհի հաշտարարն՝ խռովայոյզ համբաւել, և զՀանուրց բարերարն՝ յարիւն թաթաւել։ Արկէք զաչս և տեսէք զտուն հայրենեաց մերոց, տեսէք զնա հողմակոծեալ և տատանեալ. տեսէք զյորձանապտոյտ ալիս գազանացեալս, զշաչիւն ամպոց և զշառաչիւն փայլատականց. տեսէք զկիրս նախանձու և ատելութեան, զայրագին յարձակեալս 'ի վերայ Մխիթարայ. ո՛ անգութ չարութիւն, ո՛ եռանդն բարեսէր. զՄխիթար ոչ այլ ինչ համարիմ ես քան զանկիւնակալ վէմ մեծի շինուածոյն՝ զոր հաճեցաւ Տէր 'ի փառս իւր հաստատել յազգի մերում։ Սալացեալք էին սրտիւ և թշնամիքն Մխիթարայ, և յընդմիմեանս բաղխել, կայծակունք աստուածային սիրոյն 'ի վեր ոստնուին։ Կրճատէին զատամունս իւրեանց 'ի վերայ առնն Աստուծոյ, և բարձրագոչ յերկինս 'ի վեր աղաղակէին. աղաղակեր և Մխիթար 'ի ձայն մեծ, զի մի հալածչացն ձայնք մինչև յաթոռն ամենակալին 'ի վեր ելցեն, և զարդարադատ ցասմանն ահեղընկէց շանթիս յերկիր թօթափեսցեն. յերկիրն զոր սիրով սիրեաց և արտասուօք եթաց, յերկիրն յորմէ արդ տարագիր մերժէր և յորում դաւադիրքն բազմանան կենաց նորա. բայց ձայն նոցա վայրենի կատաղութեան էր, և Մխիթարայն քրիստոսանուէր հեզութեան. և Աստուած լսէ նմա։ Դոքա իբրև զիսառնաղանձն հեբրայեցի գոչեն սրտմտութեամբ եթէ խաչեսցի որ խռովէն զազգս. և նա թէպէտ և խաչեալ նեղութեանց, 'ի խաչէ անտի զաստուածայինն արձակէ ձայն զանգիտութեան մեղանն անյիշատակ առնել։ Դոքա զարիւնն ինդրեն անպարտական 'ի վերայ անձանց և 'ի վերայ որդւոց իւրեանց, և Մխիթար զայն յԱստուծոյ պաղատի 'ի վերայ անձին և 'ի վերայ անձանց ընկերաց իւրոց և 'ի վերայ մեր։

Յառնէ յոտն կայ Մխիթար թօթափել զփոշին յոտից. զինքն և զիւրսն ամբայուցանէ յանառիկ դղեկի ձեռաց աստուածամօրն, և իբրև զնոր ոմն Մովսէս կայեալ առ ափամբ կոհակացն դիզացելոց Կարմիր ծովուն, քաջալերս հօտինն փոքու ազգէ, միով ձեռամբ զեր-

կնից օժանդակութիւնն ցուցանելովնո-
ցա եկեալ հասեալ, և միւսովն 'ի խորս
յորձանապտոյտ ծովուն զձանապարհն
ցուցանելով զոր պատրաստեր Աստուած
'ի փրկութիւն։ Զոքա թէպէտ և ան-
երկմիտք ընդ վերին օգնականութիւնն,
բայց զձայն լուեալ զկուտակելոց ջուրցն,
և զահագնագոչ սպառնալիս յորձանուտ
ալեացն տեսեալ, զահի զդողանի հա-
րեալ երկիւղիւ պակչէին. բայց այրն լի
շնորհօք՝ Մխիթարեր սրտապնդեր զնո-
սա, և առեալ ածէր մինչև 'ի Պեղոպոն-
տիա. անդ պատրաստեր նմա Աստուած
զոր յերկրի հայրենեացն Թուէր զլանալ.
անդ սփոփանս ընդ ցաւոցն ընդուներ
Մխիթար. և որք իբրև խռովարարս
ոմանս մերժէին, խաղաղութեան հրեշ-
տակք 'ի բնակչացն վկայէին. որք տա-
պալիչք աստուածային կարգացն համ-
բաւէին, զնոսա մեծաջան վաստակա-
սերս 'ի պաշտօն Աստուծոյ և 'ի փրկու-
թիւն հոգւոց քարոզէին։ Զնտի քա-
հանայք տեառն, ո՛հ քստմնիմ ասել,
սեղանոյն պաշտօնեայք, զգործն տէ-
րունի տապալել խորհին. աստի կորն-
թացուցն քսղաքի մեծ դիտապետ վկայ
և Ջատագով'ի մէջ անցեալ բազմի. ան-
տի խռովայոյզք յիշխանաց զաղաղակ
բառնան անՃետ բնաջինջ զՄխիթար
կորուսանել, աստի ընդդէմ նոցա ոսոխք
արձանացեալ բազմին իշխանքն պա-
տուականք Լամոյ և Մոչէնիկոյ. նոքա
հալածեն, սոքա վայելչակերտ տուն և
տեղի բնակութեան նմա շնորհեն. նո-
քա հռչակ հարկանեն զՄխիթար իւ-
րովքն անաշխարհիկ թափառական կո-
րուսեալ, սոքա 'ի ձայն փողոց և նուա-
գարանաց զհիմունսն ձգեն զտեառնա-
բնակ տաճարին։

Այլ և ոչ աստ էր երկիրն խաղաղու-
թեան, այլ առհաւատչեայ լեթ էր
այս Աստուծոյ աւետեացն. ո՛հ, հարկ
էր նմա թողուլ և զայս տուն, թողուլ
զհիւրամեծար ափունսն, թողուլ և զո-
մանս յորդւոց իւրոց... և թողուլ 'ի
բերան վայրենացեալ սրոյ թշնամւոյն...
զի որ պարգևեացն նմա զայսոսիկ տէր,
միւսանգամ 'ի բաց առնոյր 'ի նմանէ։
Ա՛հ, դժուարամարտ էր արդարև հան-
դէս սիրոյն, և մե՛ծ, եթէ տայք ինձ
ասել, քան զԲրահամուն պատարագ.
զի ոչ զորդին լեթ, այլ և զանձինս,
զեղբարս, զվիշտս և զտառապանս հա-
նէին յողջակէզ... Ա՛հ, մի՛ տեր. շատ
իսկ զհաւատարիմ պատուիրանապա-
հութիւնն փորձեցեր զքոյոյ ծառայի.
հայեա՛ց յարտասուս նորա և յարտասու
որդւոց նորա. հայեաց 'ի չքնաղակերտ
մենաստանն զոր ամենազօր ձեռն քո
կառոյց, և զքրտունս հնգետասան դառ-
նակսկիծ ամաց 'ի միում ժամու կորու-
սանիցե՞ս. մի դարձեալ ո՞չ ելանիցես 'ի
խնդիր տասն արդարոյ, ուր ահաւասիկ
հոյլք նոցա, որպէս զարմաւենիս ծաղ-
կեալ շուրջ դան զսեղանով քով։ Ա՛հ,
մի՛ խորշակ դառնութեան զնորընձիւղ
բողբոջն ցամաքեցուցցէ զՀայաստան
ազին...։ Այլ շշուկ ահաւոր մարտին
բառնայր զամենայն ակնկալութիւն 'ի
սրտից նոցա. և խորհուրդք աստուա-
ծայինք անհետացօտելիք են մարդկայ-
նոյ տկարութեան աչացն. քանզի ձեռնն
բարերար ոչ զչարիս լեթ՝ այլ բազում
այն է զի և զբարիսն 'ի մէջ հեռացու-
ցանէ՝ որոց արտաքին լեթ կերպարանք
են լաւութեան։ Զորովին գութք խը-
նամոցն Մխիթարայ. զաչսն արտա-
սուալից և զձեռսն դողդոջոտս յերկինս
'ի վեր ամբառնայ, և սրտառուչ զորհ-
նութիւնս մաղթէ վասն փոքու հօտին,
զոր այնուհետև ոչ մարդ մահկանացու,
այլ երկնից կամք տարագիր հալածէին
'ի սրբանուէր վայրացն. փարի զորդուվ-
քրն, փարի զսեղանովն սրբութեան և
արտասուք յաչացն վտակօրէն կայլակեն.
և սիրտն անդամանդեայ որ մահու և
հալածանաց, վշտաց և նեղութեանց
դիմագրաւ նահատակեր, ոչ ևս ժոյժ
ունի յարտասուագին հառաչանացն, և
սիրտն ցաւագին՝ ցաւագնելոցն Մխիթար
մատուցանէ։ Ա՛հ, 'ի վերայ շինուածոյ
մենաստանին, ոյր մօտալուտ 'ի վերայ
կայր կործանումն, ընչասպառ անկանէին
և ինքեանք. ընդ սպասուց եկեղեցւոյ
խարուկէին և անարատ սիրտք նոցա
յողջակէզ, եթէ ոչ կամք Աստուծոյ

քաղցրացուցանէին նոցա զվիշտս տա-
ռապանացն։ — Բայց հրաման ստիպո-
ղական զսիրելիս 'ի սիրելեաց, զդաստա-
կերտ 'ի քրտնաջան վաստակաւորաց,
զեղբայր յեղբօրէ անջատէր, ոմանց
պատրաստելով 'ի զոհ մարդախոշոշ եր-
կաթոյն, և այլոց զանձինս լուծական
ահեղ ալեացն մատնելով։ Հոգին ուռու-
ցիկ գալարեր գոգ տայր առագաստիցն,
նոցա աչքն հալեալք 'ի դղեակն հայէին
և զտունն նկատէին և զեկեղեցին սըբ-
բութեան. ծածկէր յաչաց նոցա տեսիլն,
և 'ի միտն դեռ կենդանի կայր յի-
շատակն. 'ի վերայ ընդարձակածաւալ
ծովուն նոքա զԱթոն խնդրէին անլը-
ռելի արտասուօք, նոքա զեղբարսն որ-
ոնէին զսիրով սիրեցեալսն, և հառաչանս
արձակէին... Այլ Խիթար Թէպէտ
անդադար 'ի դառնութեան արտասուա-
ցըն, յերկինս զանդրդուելի խարիսխս
յուսոյն արկեալ ձգէր. և 'ի հովտէ ան-
տի արտասուաց, 'ի բարձանց փրփրա-
ցեալ ալեացն և 'ի լերանց վշտաց և ցա-
ւոց տեսանէր զվայրն պատրաստեալ յա-
ռատագութ կամաց բարերարին... որոյ
ձեռքն սանձակալ ալեացն լինելով բըր-
նութեան, զհիւրադաւ ըմբոստացեալ
բերանսն կարկէին, և ածեալ հասուցա-
նէին մինչև 'ի խաղաղասիրք ափունս
հանգրուանիս։ Յայնժամ ապա ամեն-
արուեստ Ճարտարապետն Աստուած՝
միւսանգամ անդնդալիր զհիմունսն ձգէր
զլուսատու բարձրաբերձ աշտարակիս
խաւարելոցն մեղրք և ալեկոծ տագնա-
պելոցն տգիտութեամբ. ձգէր զհիմունս
աստուածապահ դղեկիս իմաստութե՛ն,
և խորտակէր զզօրութիւն ալեացն վըշ-
տաց։ Հինն և բարեպաշտոն հասարա-
կաց պետութիւնն՝ զնոր հիւրան անձկով
ընդունէր՝ և ընդ փաղանգս հրեշտակե-
րամ բարապանաց իւրոյ քաղաքին հա-
մարէր և զնոսա, որ շուրջ զաղտիւրն
պատեն զծովուն. որոց բերանք օրհնա-
բանք, առաւել քան զամենայն զէնս
զօրութեան, մերժեալ հալածեն զհոյլս
թշնամեաց։ Բայց բնաւ և ընդ միտ ան-
գամ՝ ոչ ածէր, որպէս յականաւորացն ոք
վկայեաց այր, զի մեռցի նա որ կելոյ սո-
րա եղև պատճառք, և կղզեակ մի խո-
նարհ ծփեալ յալեաց՝ յերկարակեաց
քան զնա, վկայ հաւատարիմ բարեպա-
րիշտ կրօնասիրութեանն կացցէ. և
խումբ մի աստուածանուէր միանձանց,
երկնից օգնականութեանն և առատա-
տուր պարգևաբաշխ ձեռացն Ոչէնի-
կեայ շնորհապարտ զանձինս դաւանեա-
ցեն, զի ընդ հոյաշէն զարմանալիս Ճար-
տարարուեստ քաղաքիս 'ի համար գրեսցի
և կղզեակն նուիրեալոց սիրոյն Աստու-
ծոյ և ազգին, որոց կեանք վշտօք յաճա-
խեն և ինդութիւնք արտասուօք առա-
տանան։ Ոչ գիտէր նա զի որ կործան
զգահոյսն արկանէր մեծապանծ պետու-
թեանս՝, ոչ պատկառեսցէ և եթէ յերե-
սաց սորա, այլ և զդաստիարակեալսն 'ի
սմա 'ի ծոց իւր և 'ի մայր քաղաքացն
հիւրամեծար ասպնջականեսցէ։ Օ՛ի
արքայք և իշխանք, մեծատունն և
անինչ, տառապեալն և բարեբաստիկ,
հիացմամբ զաչս առ նա դարձուցանի-
ցեն։ Օ՛այս և ոչ ինքն նկատէր Խի-
թար. քանզի և ոչ այսպէս արար տէր
ամենայն ազգաց։

Բայց Թէպէտ և խաղաղութիւն եր-
կնաւոր շուրջ պատէր զԽիթարաւ և
զորդւովք նորա, այլ հարկ էր երկրա-
ւորացս յոխալոյ և 'ի բամբասանաց ոչ
լռել, զի մի՛ խաղաղութիւնն դրդուես-
ցի։ Փոքրիկ և դեռաբոյս էր տակաւին
Խիթարեանս մեր, վասն որոյ և
կարօտեալ իսկ բազմագութ ողորմու-
թեանց բարձրելոյն. նոցա բերանքն
որք զմեզ չարաբանեն, որպէս երանելի
հայրն մեր ասէր Խիթար, խողո-
վակք են ընդ որ ի՛ջանեն և զեղանին
'ի մեզ ջուրք ողորմութեան և գթու-
թեան Աստուծոյ. աղ էին նոքա հա-
մեմիչք, որ Թէպէտ սակաւ մի կսկծե-
ցուցանեն, այլ և պահեն իսկ 'ի նե-
խութեանց։ Երկնաւոր էր վարդապե-
տութիւնն Խիթարայ, այլ երկրաւոր
ոխութիւնն որ նմա ընդդէմ դառնայր.
զարմանաց և քէն վրիժուն, որ խռովս
'ի հայրենին հանէր աշխարհ, որ զա-

1 Նափոլէոն, Գաղղիացւոց միահեծան իշխող։

շակերտս նորա մերժեալ հանէր 'ի տէ-
րունեան այգւոյն. և յանդգներ մինչև
յաթոռն առեալ ածել զյաչաղանս բամ-
բասանաց ուր վերհապետն նստի Դրիս-
տոսի փոխանորդ։ Բամբասանք զՄխի-
թարայ յաճախէին և զաշակերտացն
նորա, 'ի նենգուպատիր սրտից և 'ի
մախացող բերանոց և 'ի տգէտ շրթանց.
բամբասին յաղագս անարատ վարուցն,
յաղագս կենսաբեր երկնայնոյ վարդա-
պետութեանն, յաղագս օգտակար և
ընտիր մատենից. սոցա բերանքն յօր-
հնաբան գովաբանութեանց, և նոցայն
'ի բամբասանաց ոչ լռէին. սոքա զՀա-
լածիչն օրհնէին, և նոքա քարամբք
վշտաց զնոսա քարկոծ առնէին... Ո՛վ
քարինք վշտաց և նեղութեանց, որք
զՍտուծոյ առաքեալն հալածական
մերժէին, որք սուրբ վկայիցն արեամբ
զտիեզերս առոգանէին, որք զՍտեփա-
նոսիւ կարկառս բարձրաբերձս դիղեալ
կուտէին, որք և զնոյն ինքն զմարդա-
ցեալ Բանն, և զբուն իսկ զՀանա-
պարհն և զՀշմարտութիւն քարկոծել
ժպրհէին, փոխանակ զի Հշմարտու-
թեանն վկայեաց. նոյն քարինք էին որ
'ի վերայ Մխիթարայ և աշակերտացն
նորա իբրև զտարափս կարկտի թօթա-
փեալ անկանէին։ — Բ.յլ վերք նոցա
յաղթանակք են պանծալի. այն ինչ
զնոսին ընկալեալ յերկրի, անդէն եր-
կինք զՀամբերողացն ածեն 'ի գլուխս
նոցա զպսակ. զարիւնն հեղուն և ար-
մաւենեաք փառաւորին. վշտաքն առա-
ւել յաղթական հանդիսացեալ քան
չարատանջ. քանզի տեր 'ի քարանց ան-
տի յօրիներ պսակս վայելուչս և հիւսս
վարսակալաց, զի դիցէ 'ի գլուխս նոցա
պսակ 'ի քարէ պատուականէ։ Օ այս
հիմունս ետես Մխիթար, զնոյն և՝ որ-
դւոյն յանձնեաց. ետես զկրՀել ատա-
մանցն և յօրհնութիւնս զիւրսն յոր-
դորեաց. ետես զարտասուս իւրոյն և
զնոսա Մխիթարեաց. արտասուեաց և
ինքն առաջի Ս.տուծոյ՝ ոչ զի զնեղու-
թիւնս յորդւոյն բարձցէ, այլ զի սիրտ
նոցա չնորհեսցէ անվկանդ և անպար-
տելի... Օ ջուրն դառնութեան սր-
բին յանապատի աշխարհիս հարքն մեր.
և որ 'ի քաղցր զայն յեղանակէր, ոչ
այլ ինչ էր բայց զփայտ սիրոյ աղգին,
զոր երբեմն Խորայէլն արկանէր 'ի դառ-
նութեան ջուրս Մեռայ. զարտօսր հե-
զին ցաւագին, և որ Մխիթար նոցա լի-
նէր, չէր ինչ այլ բայց զի առ սէր Ս.-
տուծոյ և առ սէր աղգին զայն հեղուին։

Բ.յսպիսի իմն պայման կենաց շնոր-
հէին երկինք Մխիթարայ, միշտ 'ի
վիշտս և հանապազօր յաստուածատուր
խաղաղութեան. վասն որոյ և մինչդեռ
զվայելչակերտս զայս կառուցանէր մե-
նաստան, յորժամ կարգս երկնակրօնս
մեզ հաստատէր, զվահան անդրդուելի
սիրոյն Ս.տուծոյ և հայրենի աշխարհին
'ի ձեռն առեալ, անմուխ յամենայն նե-
տից չարութեան բամբասասիրացն առ-
նէր, անմեղութեան հեզաձայն և ան-
նկուն բարբառովն յապուշ և յակՀիս
զակն տիեզերաց կացուցանէր. և ուր
թՀնամիքն ոխացեալ մոլեգին՝ յաչաց զնա
և զիւրսն հանել ջանային, ամենեցուն
աչք 'ի կղզեակն լինէին ակնկառոյց, ա-
մենայն բերանք զՀայրն բարեգութ գո-
վէին, և ամենայն ականջք ընդ նա զար-
մանային։ Բ.յսպէս և չարութիւն խայ-
տառակեալ մերկանայր զպատրուակն
առաջի անյիշաչար անոխակալութեանն
Մխիթարայ. և որք զնա 'ի խաչն ցա-
ւոց բևեռէին, նոքա քաղքէին զկուրծս՝
զիմաստնոյն գոչելով. "Մեք անմիտք՝
զվարս դորա մոլորութիւն համարէաք,
և զվախՀան դորա յանարգութիւն.
զիարդ համարեցաւ ընդ որդիս Ս.տու-
ծոյ,,. և որք զնա բամբասանօք քարկոծ
առնէին, յանցանել թափոյ սրտմտու-
թեանն և 'ի լռել նախանձայոյզ վայրա-
գութեան, իբրև զնոր Սաւղոս զգաս-
տացեալ մտաբերէին, և իղձ իմն լինէին
միւսանգամ զքարինսն յերկրէ ժողովել
և անձամբ զանձինս կոծել։ Օ՛ի ոչ
մինչև 'ի սպառ երկայներ ձգէր Հանա-
պարհն անդիտութեան, յոր կամաւ
խարխափեալ անկանէին. ծագէր 'ի
սիրտս նոցա նշոյլ լուսոյ սուրբ աւետա-
բանին, այն որ զաշխարհ լուսաւորեաց
և զՄխիթար փառաւորեաց. տեսա-

նէին ուր ուրեմն զԱ՛խիթար 'ի հան-
գրուանին սրբութեան մեկուսացեալ,
և ինքեանք ևս գոյին շուք մեծարանաց
և սպասու հարկանել նմա։ Աստուած
էր՝ որ 'ի սրտին Թափէր զմաղձն դառ-
նութեան. Աստուծոյ շնորհք էին որ
առաւել քան զամենայն հողմ քաղցրա-
սիւք՝ զնաւակն սրտից նոցա բաղխմամբ
ալեաց Թշնամանադիր նենգութեան, 'ի
խաղաղաւէտ առեալ ածէին 'ի կայանս.
'ի խաւարէ անտի զլոյսն տեսանէին որ
զաչսն շլացուցանէր, և կորակոր ամա-
չէին։ Ո՛ զոլոր զօրութեանց Ա՛խիթա-
րայ, որում ատելութիւն և քէն, ուր
ուրեմն զլեռնն յանձն առնէին. կը-
ռուեալք ընդ աստուածախրախոյս նա-
հատակին, և զնա յաղթահարել ոչ
լեալ գամագիւտք՝ 'ի նմանէ յօժարա-
միտ պարտէին. երկոցուն միանգամայն
ընդ Աստուծոյ շնորհացն առաւելու-
թիւն զարմացեալ հիանալով։

Այնուհետև հանգստարան վայրս
սրբութեան՝ տուն գանձու լինէր Հայ-
աստան ժողովրդոյ. աստէն թուէին
սլանային ոտք աւետարանչացն խաղա-
ղութեան, լսելի առնել զբանս պատգա-
մացն ընդ ամենայն երկիր. աստէն մա-
տեանքն ծաւալէին երկնայնոյ և երկրա-
ւոր վարժից. աստէն գետքն խաղային
յորդառատ վտակաց բանին, զծարաւե-
լոցն հարկանել պասուք. և այլ զի գի-
տեմ, ծագք աշխարհաց տեսին զորդիս
Ա՛խիթարայ, և երանեցին քաղդին
Հայկայ. տեսին զնոսա ալիքն դիզա-
ցեալք բարձրացեալք, տեսին և Թխա-
տիպ տիրազգեաց քարինք խաւարչուտ
բանտից, և զարմացան ընդ սէրն Աս-
տուծոյ և ազգին, որք և զկեանս ան-
գամ խնդութեամբ մերկանան. տեսին
զնոսա արևելք և արևմուտք, և հիա-
ցան ընդ սէրն աՀեցուն և 'ի հալա-
ծանս անդ։

Լրումն լինէր աղետիցն Ա՛խիթարայ,
մոռացուցանէր նմա Աստուած զվիշտս
տառապանացն և 'ի տառապանս անդ.
և ահաւասիկ զարտասուն տեսանեմ
զծնեալսէր որդեկացն, և զհառաչանս
լսեմ զնոցա. ա՜հ, զի՞ եղև, ընդէ՞ր սպըր-
դեցաւ եմուտ 'ի նոսա տրտմութիւն.—
և զիա՞րդ ոչ—. Աղիսէոս առ Յորդա-
նանու կայ, և Աղիայի կառքն հրեղէնք
իջանեն յերկնից. Ա՛խիթարիչն եր-
թայ, և զուրախութիւնն ընդ իւր ա-
ռեալ տանի. Աստուծոյ առաքեալն զըն-
թացան կատարեալ զՀաւատս պահեալ,
այսուհետև կայ մնայ նմա զարդարու-
թեանն առնուլ պսակ, զոր պատրաս-
տեաց Աստուած սիրելեացն իւրոց։ Ա՛հ
ոչ. Ա՛խիթար ոչ եմուտ 'ի մահիՀս մա-
հու, այլ ոտնփոխ մի և եթ արար յարա-
հետն յաւիտենականութեան, 'ի Հանա-
պարհն զոր քրտնալիր հատանէր անդլս-
տին 'ի գեղածաղիկ աւուրց մանկութե-
իւրոյ. պահօքն և ապաշխարութեամբ,
հալածանացն վշտօք՝ զօրհանապազ 'ի
մահն մերձենայր Ա՛խիթար, յառհա-
ւատչեայն յաւիտենից երանութեան.
վասն որոյ գիրկընդխառն ընդ նմա լինէր,
առաւել քան զամենայն բարեկամ զնա
ողջագուրէր. և զդոյզն զայն մասն մար-
մնոյն զոր հանապազօրեայ Հգունքն ոչ
մաշեցին, զանծախն 'ի հրոյ սիրոյն Աս-
տուծոյ և հայրենեաց, յոր անխայեցին
խարազանաբախ Հգունքն և լալահա-
ռաչ արտասուք, նմա յանձն առնէր,
թեթևակի թուէլ վերանալ յամենա-
ժողով տօն սրբոցն խրախութեան։ Ա՛ն
դահիՀանագորոյն՝ այլ բարեկամ ըղձա-
կաթ զնա համարէր, որ լրումն տալ ե-
կեալ իցէ փրկութիւնաբեր գործոյն,
յոր անձամբ ձեռն էարկ։ "Ա՛ռ զիմս,
աղաղակէր Ա՛խիթար, դու զիմս, ո՛վ
մահ, կամիս յինէն զմարմին. յայդ և
ես ինքն ջան եդեալ տքնէի յեօթանա-
սուն ամաց և այսր„։ Ա՛հ, արդարև
հանապազօր 'ի բռին ունին արդարքն
զոգիս, յօժարակամք 'ի դարձուցանել
զայն որում շնորհեացն. և արգասիք
վաստակոցն Ա՛խիթարայ մղէին Հե-
պեցուցանէին իմն զնա, երթալ առ-
նուլ զպսակն փառաց։ Ա՛հ ոչ. Ա՛խի-
թար ոչ անկաւ 'ի մահիՀս մահու, այլ
եկ նա 'ի լեառն փառաց յաւիտենակա-
նութեան, ետես զերկիր աւետեաց յեր-
կինս, դարձաւ յերկիր՝ ետես և զերկիրս
զայս պարգևական. և արտասուք խըն-

դութեան յաչացն քամէին. դարձոյց զերեսս և 'ի թիկունս կոյս, և քաղցրախառն յիշատակութիւնք վշտացն զեղանլցան 'ի սիրտ նորա. ետես զբազմութիւնս ազգաց զգումարեալսն 'ի վերայ իւր 'ի պատերազմ. զվտանգն բազմապատիկս, զցաւս անհնարինս, և ետես 'ի սպառուած աղցաւոր կենացն զանձն իւր ժամանեալ. ետես զհարսն ձեր, ետես զձեզ և զվաստակս ձեր, հառաչեաց և արտասուեաց. եթող առ մեզ զօրինակ առաքինակրօն վարուցն և համբերատար ժուժկալութեան. լուեցին հեծեծանք նորա, լուեաց և հոգին... Այս թուեաւ յերկինս Մխիթար, որ էարբ զբաժակն դառնութեան. խզեաց զոտնակապս գերութեան, եկ յերկրէ վշտաց ուր հեծէրն ցաւագին։ Յափշտակեցաւ Մխիթար 'ի ծոցն աստուածեղէն, ուստի եկն նորա եղեն. մեկնեցաւ յաշխարհէ, որում չէր արժանի. և սեղան զոհին Մխիթարայ, լիներ մահաձեկոյց հանգստարան շիրիմն։

Այս եմուտ Մխիթար 'ի կայանս երջանկացն. եկն նա 'ի մահուանէ և խառնեցաւ 'ի կեանս. հոգին 'ի ձեռս հրեշտակաց, և մարմինն յողբս աշակերտաց. յերկինս խնդութիւն, յերկրի արտասուք։ Վերացաւ Մխիթար, և ո՞ զապերջանիկ աշակերտելոցն գումար սփոփեսցէ... Վա՜ւ ոչ. Մխիթար ոչ մեռաւ. Մխիթար յերկինս, բայց ոգի նորա կենդանի է յաշակերտս իւր. կենդանի է Մխիթար 'ի ջանս և 'ի վաստակս նոցա. կենդանի է Մխիթար յաստուածապատիւ Վահագլուխ ուխտիս, զոր սէրն Աստուծոյ և ազգին հեռի յանթոռոյն դեգերեցուցանէ. քրտունք նորա և արտասուք, քրտունք և արտասուք են Մխիթարայ. հառաչանք նորա և վաստակք՝ զօրհնութիւնս երկնից ցօղեն կուտեն 'ի գլուխս մեր. կենդանի է Մխիթար յաշակերտս իւր, զորս սէր ազգին Հայնեցուցանէ, և որոց զվիշտս քաղցրացուցանէ սէրն աստուածային։ Յանմահութիւն Հակատագրեաց Աստուած ձեռք զՄխիթար. յանմահութիւն և զմեզ Մխիթարաւ. վիշտք և ձիւնաբերք անձկութեանց՝ սոքա ամրապահեստ հիմունք են Մխիթարեանս մերոյ. սոքա անտեղիտալի յամենայն վտանգաց և ցաւոց զաստուածանուէր զյարկս գործեցին յերից յոբելեան ամաց և այսր։ Օրհնեա՛լ տէր Աստուած Մխիթարայ, որ զբիւրաւորսն Լղիսէի շուրջ զարբութեան կայանքս պար առեալ շրջեցուցանէ. օրհնեա՛լ տէր Աստուած Մխիթարայ, որ զհուր հնոցին 'ի քաղցրութիւն յեղանակէ զովագին օդոց, և զիւրսն 'ի վիշտս անդ անդադարս յաստուածահաճոյ վաստակոց գործէ։ Լահատակս կարգեաց զմեզ Աստուած սիրոյն իւրոյ և հայրենեաց. 'ի նոցուն կենդանարարնետից խոցեցաւ Մխիթար, խոցեցան և սիրտք աշակերտացն նորա. երանի՛ մեզ եթէ խոցեսցին և սիրտք մեր։ Ա՜հ, չեմք ինչ ազնուագոյնք քան զհարսն մեր և զվարդապետս. մանն որ զնոսա անմահացոյց և յերկինս և յերկրի փառաւորս արար, անմահացուսցէ և զհետևողս նոցին. քիրտն զոր նոքա հեղին, և զմեր Հակատս ծանրացուսցէ. նուազեսցի արարածական մխիթարութիւնս, անարատ լիցին կայանքս յերկրաւոր այցելութեանց, զի երկնաւորքն առատասցին. հարցին բաղխմունք կռանացն երկրաւորաց, զի շէնս Աստուծոյ հաստատութիւն առցէ։ Այսպիսի նահատակս կամի Աստուած, այսպիսի աշակերտս խնդրէ Մխիթար, այսպիսի վաստակասէրս խնդրէ և տուն հայրենեաց մերոյ։

1851, Ապրիլ 27։

Հ. Գ. Զ.